ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 4-ին, կիրակի.- Աշխարհամատչուան (Կանուչ Կիրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առթիվ հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Ալեքսանդրիայի Պապ և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ-ն, իբրև քույր Եկեղեցիների Գահակալներ, իրենց պատգամն ուղղեցին հավատացյալ ժողովրդին:

Մայիսի 11-ին, կիրակի.- (Կարմիր Կիրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Միքայել եպս. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Էջմիածինը դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի հույսը, դարեր շարունակ հեթանոսների է ենթարկվել և այսօր գոյություն ունի հայ ժողովրդի համար» (Արտակ եպս. Սմբատյանց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 45):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 18-ին, կիրակի.- Տօն Երեւման Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սեպուհ եպս. Զուլջյանը: Հընթացս Սուրբ և Անմահ Պատարագի պատարագիչ Սրբազան Հայրը կատարեց քահանայական ձեռնադրություն, որից հետո հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 48):

Մայիսի 25-ին, կիրակի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Եւ ծագեսցէ ձեզ երկիւղածաց անուան իմոյ արեգակն արդարութեան...» (Մաղ. Դ 2-3) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 50):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 28-ին, չորեքշաբթի. - Առաջին Հանրապետության օր:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ի ոգեկոչումն 1918 թ. Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք:

Մայիսի 29-ին, հինգշաբթի.-Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ աբդ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Սա է, որ ի գերեզմանէն յարեաւ եւ աւերեաց զդժոխս եւ վերհամբարձեալ փառօք գայ առ Հայր՝ Տէր կարող ի պատերազմի» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 53):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ ի հիշատակ 1441 թ. Հայոց Հայրապետական Աթոռի՝ Սսից Լուսավորչահաստատ Ս. Էջմիածնում վերահաստատման: